


Մեծագույն յարմարություններ



# ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ

## ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ

Թիի 11, 12

ՆՈՅԵՄԲԵՐ—ԴԵԿՏԵՄԲԵՐ

ՅԱ. ՏԱՐԻ 1937

### ՆԿԱՐԱԳԻՐ ԿԱՐԳԱՅ Ի ԲԱՆԻՑ ԵԶՆԿԱՆ ԵՐԻՑՈՒ

1. Այս խորագրի տակ հասած է մեզի գրուածք մը Պարիսի Ազգային Մատենադարանի Թ. 112 հայերէն ձեռագրին մէջ, թղ. 291ա—292ա<sup>1</sup>: Ձեռագիրս, որ կը բովանդակէ թղ. 1—104 Յաճախապատում եւ թղ. 108—290 Ազգաթանգեղոս, գրուած է «Ի թուականին Հայոց ԶԳ. (1254), Ի քաղաքիս որ կոչի ՌԻՄ, ընդ հովանեաւ սուրբ տաճարիս, որ (յօր. որոյ) յանուն սուրբ աւետարանչացն Յովհաննու եւ Մատթէոսի. եւ է սա հոգեւուն Հայոց»:

Ձեռագրին վերջին թղթերը, ուր կը գտնուի «Նկարագիր կարգաց», նորոգութիւն տեսած է. նորոգելը տեղ տեղ թուղթեր փակցուցած է, որով ծածկուած են զրեր եւ բառեր. այս ծածկուած զրերու ընթերցուածը յետոյ նորոգչէն արտադրուած են փակցուած թուղթերու վրայ:

Այս օրինակէն ծագած են՝ Վենետիկի Մխիթարեան Մատենադարանի Հաւաքածոյ Ա., էջ 35 = Թ. 294, 20ա—բ, յամէ 1824 Ա., (հմտ. Հ. Բ. Սարգիսեան, Յուլիոս, Բ., էջ 1059—1060). եւ Յաճախապատում Գ. եւ Ազգաթանգեղոս 2., էջ 347 (հմտ. Հ. Բ. Սարգիսեան, Ազգաթանգեղոս եւ իւր բաղձարեան գաղտնիքը, էջ 315): Ունիմ աչքի առաջ օրինակութիւն մը, զոր հանած է Հ. Յ. Գաթըրճեան Պարիսի օրինակէն:

Պարիսի օրինակէն արտադրած եւ հրատարակած է զայն Արշակ Տէր-Մխիթարեան, Մամուլ Անեցոյ Ժամանակագրութեան Ծանօթութիւններու մէջ, Վաղարշապատ 1893, էջ 266—268:

2. Այս տեղ կը հրատարակեմ գրուածքս միւսանգամ, հիմ առնելով Հ. Յ. Գաթըրճեանի օրինակութիւնը Պարիսի ձեռագրէն:

<sup>1</sup> F. Macler, Catalogue des Manuscrits arméniens de la Bibliothèque Nationale, Paris 1908, p. 55.

Ա.

### ՆԿԱՐԱԳԻՐ ԿԱՐԳԱՅ

Ի ԲԱՆԻՑ ԵԶՆԿԱՆ ԵՐԻՑՈՒ

Թի ուստի՞ էին ԿԱՐ ՈՐՊԵՍ ԶԻԱՐԳ ԶԱՋՈՐԳՈՒԹԻՒՆԲ ԹԱԳԱՌՈՐԱՅՆ՝ Ի ՏՐԳԱՏԱՅ ԵՒ ՔԱԼԱՆԱՅԱՊԵՏԻՑՆ՝ Ի ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԷ, ՈՐ ԿԱՅԻՆ ՄԻՆՁԵԻ ԱՌ ՄԵՁ. ՎԱՐՈՒՄՆ ՓՈՔՐԻ ՇԱՏԷ ԴՐՈՇՄԵՆԱԼ ՎԱՍՆ ԳԻՏՈՒԹԵԱՆ Ի ՎԵՐԱՅ ՀԱՍԱՆԵԼՈՅ

Յեա Տրդատայ թագաւորեաց որդի նորա<sup>1</sup>, որ կոչեցաւ Փոքր Խոսրով: Ի սորա աւուրս եկաց քահանայապետ երէց որդին Գրիգորի Վրթանէս:

Յեա նորա Տիրան, որդին Խոսրովու: Ի սորա աւուրս Յուսիկ որդի Վրթանիսի եկաց քահանայապետ:

Յեա նորին թագաւոր յաւուրս Տիրանայ: Յեա մահուան Յուսիանն կալաւ քահանայապետութիւնն Հայոց Փառնեքոսն ոմն մի յազարակէն Մատրանն Յովհաննու, Ի Տարան գաւառէ Ի Մեհենաղեղջն<sup>2</sup>, որ մայր է եկեղեցեացն Հայոց, այսինքն նախ անդ եկեղեցի գառաջին շինեալ:

Յեա նորա թագաւորէ Արշակ որդին Տիրանայ: Ի սորա աւուրս Ներսէս որդի Աթաւանայի եկաց յաթոնն Յուսիանն՝ թոռ(ի)ն Գրիգորի մեծի, զորմէ ասեն համեմատեալ Գրիգորի Ի գործս կարգաց վարուց զնացից իւրոց: Զկնի սորա Մահակ. սա եկաց կաթողիոս: Եւ ապա Շահակ եւ Զաւրէն եւ Ասպուրակ կացին կաթողիկոսք, որ էին Ի գաւազէ Ազրիանոսի եպիսկոպոսի:

Յեա նորա Պապ որդին Արշակայ:

Յեա նորա Վարազդատ Ի նմին թագաւորութեանն տոհմէ: Եւ<sup>3</sup> ապա օտարակալութիւն:

Ապա Խոսրով ոմն Ի նմին տոհմէ թագաւորացի:

Խորագիր. Ի [բանից] շիք: Ի [Տրդատայ] շիք:  
<sup>1</sup> Զ. որդին իւր:  
<sup>2</sup> Զ. Ի մեհենաղեւաղջն:  
<sup>3</sup> Զ. որ:

երացն Հայոց: Առ սովաւ բաժանեցան զեր-  
 30 կիրն Հայոց ընդ երկու՝ թաղաւորն Յունաց եւ  
 թաղաւորն Պարսից: Պարսից կողմանն Սոս-  
 րով թաղաւորէ: Մասինն Յունաց աշխարհին  
 Ա. <ը> շակ ոմն ի նմին տոհմէ թաղաւորէ  
 հրամանաւ Յունաց թաղաւորին: Յետ սորա  
 35 կոմէսք կալան:

Յետ <Սոսրովու> Վոամշապուհ[ոյ],  
 որ կողմանն Պարսից թաղաւորեաց:

Ապա ամս հարուստս մարդպանք Պարսից  
 կալան մինչեւ առ մեզ:

Իսկ ապա Արտաշէզ որդի Վոամշապու-  
 40 հոյ թաղաւորէ հրամանաւ Պարսից արքային:

Եւ ապա մարդպանք պարսիկք կալան  
 մինչեւ առ մեզ:

Առ որով Ասպուրակէս կաթողիկոս:

Եւ դարձեալ առ որով ընտրեցաւ Սահակ  
 45 անուն լինել կաթողիկոս, որ է որդի Ներսեսի  
 առաքինւոյ, թոռն Աթանազիոնէ <ը>, թոռն  
 սրբոյն Գրիգորի:

[Առ սովաւ եւ դպրութիւնք Հայոց յա-  
 50 ջորդեալ. եւ կտակարանք եկեղեցւոյ ի սմանէ  
 յառաջ թարգմանեցան: Եւ կարգք դործոցն  
 Գրիգորի նորոգեալ՝ արամբ միով երանելեաւ  
 Տարանայուով<sup>4</sup>, որում անուն Մասրովպ  
 ճանաչէր. որ է առ զձեռնադրութիւն երկու-  
 55 թեան ի նմին Սահակայ կաթողիկոսէ: Սա  
 եղիտ նշանալիք դպրութեան հայերէն լե-  
 զուին՝ վարելոյ արխաբետացն<sup>5</sup> հանդամանս:

Յորում ժամանակի լցան նոքօք կարգքն յա-  
 60 ռաջադիմութեան:]

[Եւ նոցուն աշակերտ Ղեւոնդ, այր սուրբ  
 եւ ընտրեալ եւ ճշմարիտ ի դործ մշակութեան  
 Ատուծոյ. եւ Արձան եւ Կորիւն եւ Եղնիկ եւ  
 արբանեակք նոցուն լուսաւոր հանդիսին՝  
 ձեռնադրեալքն ի սրբոյ կաթողիկոսէ:]

Բ.

Եւ եղեւ հանունն եւ նորոգունն ոսկե-  
 րացն սրբոցն Գայիանեայ եւ Հոնիսիմեայ եւ  
 ընկերաց նոցին ի Սահակայ կաթողիկոսէ.  
 զի եղածովն Գրիգորի կային նոքա: Եւ շե-  
 65 նեաց զվկայարանն վիմատաշ կոտածոյ քա-  
 րամբք ի Վաղարշապատ քաղաքի. եւ նորո-  
 գեաց դառն Ատուծոյ, այսինքն զսուրբ եկե-  
 ղեցին: Չի մեծին Գրիգորի եղեալ էր զհի-  
 մունս զայն. որպէս եւ ցուցեալ էր <ը>  
 70 Տեսլեանն երեւեցելոյ:

<sup>4</sup> Չ. Տարանայուոյ:  
<sup>5</sup> Չ. արաբիտացն:

Բաղում եւ այլ տեղիս նորոգեալ է սուրբ  
 եւ ճշմարիտ կաթողիկոսն մեծ Սահակ:

Եւ ապա շինեաց զսուրբ եկեղեցին եւ  
 զվկայարանս սրբոցն ընդ ամենայն տեղիս  
 Հայոց մեծաց:

Եւ եղեւ այս ի յամս Արդւայի<sup>6</sup> վանաց  
 երիցու սրբոյ ի Վաղարշապատ քաղաքի մին-  
 չեւ յաւուրս Կոմիտասայ սրբոցն Հոնիսի-  
 մեանց սպասաւորի, որ արժանի եղեւ աթո-  
 ողն սրբոյն Գրիգորի, որ ցանկացաւ նորո-  
 20 գել զեկեղեցին, որում եւ շնորհեցաւ մեզ ի  
 Գրիստոսէ նախ նորոգել զսուրբ Կաթողիկէն.  
 եւ ապա զվկայարանն սրբոյն Հոնիսիմէի,  
 որ կայր նովին պատանաւ սրբոյն Գրիգորի  
 պատեալ իւրովք ձեռօք՝ ողջ եւ անքակք  
 25 խառնակք յօղիցն նովին հանդերձով, որ ար-  
 գեօք անհաւատալի թուիցի զինի մեր եկե-  
 լոց. այլ մերովք իսկ ձեռօք արժանի եղաք  
 չօչալիել յանդիման բաղամբոս հրապարա-  
 կաց. զոր փոխեաց ի հանգիստ ի նոյն յարկս  
 30 զոր շինեաց արաստոյ վիմօք: <Եւ եղեւ  
 այս> յաւուրս Յովանկան սրբոյ<sup>7</sup> Կաթողի-  
 կէի վանաց երիցու եւ Կամովեղի<sup>8</sup> նորուն  
 սրբոյ Հոնիսիմէի վանաց երիցու ի Վաղար-  
 շապատ քաղաքի. <ը> քսան եւ իններորդ  
 35 ամի Սոսրովայ արքայից արքայի<sup>9</sup>, որդւոյ  
 Որմզելի<sup>10</sup>:

Եղիցի յիշատակ Եղնիկան<sup>11</sup> ի թարգմանել  
 զգիրս զայս:

<sup>6</sup> Չ. Արդւի. «ասանկ զրոյ մը տեղ աւրուած է.  
 լայց կ'երեւայ որ ա զրոյն վերջի ահուան ալ մէկ տեղ  
 աւրուած է. եւ ըլլայ ամբողջ անունը Արդւայի» կը ծա-  
 նոթագրէ Հ. Յ. Գաթրճեան:

<sup>7</sup> Չ. սրբոյն:  
<sup>8</sup> Հ. Յ. Գաթրճեան կ'առաջարկէ կարգաւ Սա-  
 մուէղի:

<sup>9</sup> Չ. ամաքայի:  
<sup>10</sup> Սերիոս կ'երեւայ թէ աչքի առաջ ունեցած է  
 գրուածքս. համեմատէ տողերս (էջ 88—89).

«Եւ եղեւ յամի ԻԸ. թաղաւորութեանն Ապրուէզ  
 Սոսրովու՝ քահեաց կաթողիկոսն Կոմիտաս զմատու  
 սրբոյն Հոնիսիմեայ ի Վաղարշապատ քաղաքի, զի  
 կարի ցած եւ մթին էր շինուածն, որ շինեալ էր սրբոյն  
 Սահակայ հայրապետի, Հայոց կաթողիկոսի, որդւոյ  
 սրբոյն Ներսիսի: Արդ մինչդեռ քահէին զորմն մատ-  
 րանն, երեւեցաւ... կուսական մարմին սրբոյ տիկնոջն  
 Հոնիսիմէի... եւ երանելի սրբոյն Գրիգորի կնքաւ  
 մատանեալ իւրով եւ մատանեալ երանելոյն Սահակայ  
 Հայոց կաթողիկոսի, զոր նա ոչ համարձակեցաւ բա-  
 նալ. եւ ինքն (Կոմիտաս) կնքեալ իւրով եւս մատա-  
 նեաւ... Ապա ամփոփեցաւ (մարմին Հոնիսիմեայ) ի  
 կայանս իւր: Վերացոյց եւ զփայտայարկս սրբոյ կա-  
 թողիկէին. նորոգեաց եւ զխախտաւ որմոյն. շինեաց  
 զքարայարկսն: Այս եղեւ յամս Յովանկան վանուց  
 երիցու սրբոյ կաթողիկէին»:

<sup>11</sup> «Եղնիկան» (Չ. Եղնիկի) եւ «գիրս զայս» ուրիշ  
 գրչով գրուած են, կրթէ Հ. Յ. Գաթրճեան, «սրով-  
 հեան նախկին գրչէն եղածները վրան թուղթ փակ-  
 ցուելով նորոգուած են»:

Գ.	
ԺԱՄԱՆԱԿԻ ՀԱՅՐԱՊԵՏԱՅՆ ՀԱՅՈՑ	
Սուրբ Գրիգոր	ամս 1.
» Ռստակէս	ամս 1.
» Վրթանէս	ամս 1.
» Գրիգորիս	ամս 1.
» Յուսիկ	ամս 2.
» Ներսէս	ամս 9.
» Ստեփաննէս	ամս 7.
Տէր Փանկերսէս	2.
» Շահակ	7.
» Չաւրէն	ամս 1.
» Ասպուրակէս	ամս 1.
Սուրբն Սահակ	ՍԱ.
Տէր Գաղ	1.
» Յոհան Մանդանդ	1.
» Բարդէն	1.
» Սամուէլ	1.
» Մուշէ	1.
» Սահակ	2.
» Քրիստափոր	7.
» Ղեւոնդ	1.
» Ներսէս	1.
» Յովհաննէս	1.
» Մովսէս	1.
» Արարհամ	1.
» Յովհան	<1. >
» Կոմիտաս	9.
» Քրիստափոր	1.
Եզր	1.
Ներսէս	2.
Անաստաս	<1. >
Իսրայէլ <sup>12</sup>	1.
Սահակ	1.
Եղիա	1.
<Յովհաննէս>	1.
Դաւիթ	1.
Տրդատ	1.
Սիոն	1.
Եսայի	1.
Ստեփանոս <sup>14</sup>	1.

3. Գրուածքս երեք մասէ կը բաղկանայ.  
 ա. «Նկարագիր կարգաց... թէ ուստի՞  
 էին կամ ո՞րպէս զիս՞րդ յաջորդութիւնք  
 թաղաւորացն ի Տրդատայ եւ քահանայապե-  
 տիցն՝ ի Ս. Գրիգորէ, որ կացին մինչեւ առ  
 մեզ». այս ինքն յաջորդութիւնք թաղաւո-  
 րաց մինչեւ ցԱրտաշէս վերջին. եւ քահա-

<sup>12</sup> Չ. Իէ. 1. իմացի Իսրայէլ:  
<sup>13</sup> Այս ինքն ԻԳ. տարի, Բ. ամիս եւ մի օր:  
<sup>14</sup> Անունս գրուած է Ստեփ. եւ ջնջուած գծերով:

նայապետից մինչեւ ցՍահակ մեծ: Կ'աւարտի  
 տ. 45—48. «Եւ դարձեալ առ որով ընտրե-  
 ցաւ Սահակ անուն լինել կաթողիկոս, որ է  
 որդի Ներսեսի առաքինւոյ, թոռն Աթանա-  
 զիմէ(ի), թոռն սրբոյն Գրիգորի»: Այս հա-  
 տուածը, սակայն, իր ամբողջութեամբը հա-  
 ռազատ չ'երեւար, յատկապէս ընդգծուած  
 մասին մէջ: Թէ Սահակ Ներսեսի որդին է,  
 առաջին անգամ այս տեղ կը յիշատակուի:  
 Նոյնը երկրորդ անգամ յիշատակուած կը  
 գտնենք Սերիոսի քով, այն հատուածի մէջ,  
 ուր կը խօսուի Հոնիսիմեանց տաճարի շի-  
 նութեան մասին. կ'ըսուի. «զոր շինեալ էր  
 սրբոյն Սահակայ հայրապետի, Հայոց Կա-  
 թողիկոսի, որդւոյ սրբոյն Ներսիսի» (էջ 88):  
 Ապա Ղազար Փարպեցւոյ Ա. Դրուագի կեղծ  
 հեղինակը համարձակութիւն առած է գրելու  
 «մեծ քահանայապետն Հայոց սուրբն Սահակ,  
 որ էր յազգէն Պարթևաց, որդի սրբոյն Ներ-  
 սէսի» (19): Չեմ ուզեր մերժել, թէ Սահակ  
 որդին չէ Մեծին Ներսիսի, բայց կ'երեւայ  
 թէ իրողութիւնս շեշտուած չէ Ե.—Չ. դա-  
 րու հեղինակներու քով:

Եթէ պնդուի, սակայն, թէ վերոյիշեալ  
 տեղիքն, այնպէս ինչպէս ունինք, Եղնիկ  
 երէցի գրչէն է, պիտի համաձայնէի միայն  
 հետեւեալ սրբադրութեամբ. «Եւ դարձեալ  
 առ որով եկաց Սահակ կաթողիկոս, որ էր  
 որդի Ներսիսի, թոռն Աթանազիոնի՝ որդւոյ  
 Յուսիկի, թոռն սրբոյն Գրիգորի»: Բայց կը  
 թուի ինձ, թէ սկզբնապէս աւելի մօտ պիտի  
 ըլլար, եթէ ամէն յաւելուած եւ փոփոխու-  
 ըլլար, եթէ ամէն յաւելուած կարգայինք. «Եւ  
 դարձեալ առ որով եկաց Սահակ կաթողի-  
 կոս»: Աստիճան «Ներսիսի առաքինւոյ» կը  
 յիշեցնէ ինձ Ղ. Փարպեցւոյ թղթին «զկօր-  
 նաւոր առաքինւոյ եւ զմեծ լուսաւորչէն  
 Հայոց զտէր Սահակայ» (203), որ, ինչպէս  
 ուրիշ տեղ տեսանք, նոյնպէս անհարազատ  
 յաւելուած կ'երեւայ: — Շարունակութիւնը  
 յայտնապէս ուրիշ ձեռք է, զոր առինք քա-  
 սակուսի փակագծի մէջ (տես § 5):

բ. Պատմութիւն նորագութեան Հոնիսի-  
 մեանց տաճարին, որ տեղի ունեցած է Կո-  
 միտաս կաթողիկոսի օրով, 618/619ին:

գ. «Ժամանակի հայրապետացն Հայոց». այս  
 ինքն կաթողիկոսներու յաջորդութիւնք  
 Ս. Գրիգորէն մինչեւ Ստեփանոս Ա. († 790):

Վերջինս յայտնապէս առաջին երկուքէն  
 անկախ ինքնակաց գրութիւն է, յօրինուած  
 հաւանօրէն Ը. դարու առաջին կէսին եւ ապա

13 Չ. Իէ. 1. իմացի Իսրայէլ:  
 14 Այս ինքն ԻԳ. տարի, Բ. ամիս եւ մի օր:  
 15 Անունս գրուած է Ստեփ. եւ ջնջուած գծերով:



զրէ է, որ ընդլայնած է իւր առջեւն ունեցած տարրեր ձեւի սկզբնաղբիւրը:

Այդ սկզբնաղբիւր թագաւորներու եւ քահանայապետներու անուններն ունէր ժամանակագրական համադրութեամբ դէմ առ դէմ, երկու սիւնակներու կամ կանոններու մէջ «կարգօք, թուօք եւ համարօք» դասաւորուած, ուր մի առ մի նշանակուած էր, թէ ո՛ր թագաւորի օրով ո՛ր կաթողիկոսը նստած է, թերեւս նաեւ թէ թագաւորներն եւ քահանայապետները քանի՛ տարի զահակաւած են եւ ինչ ժամանակագրական համեմատութեամբ, այս ինքն կաթողիկոսները թագաւորներու քաներո՞րդ տարւոյն բարձրացած են աթոռ: Այս զուգակշիռ ցանկերը յետոյ վերածուած են միապագայ զրչութեան, ուր ոչ կաթողիկոսներու եւ թագաւորներու ժամանակակցութիւնը ճշդիւ տրուած է եւ ոչ ալ կաթողիկոսներու անունները լուր յառաջ բերուած:

Արդեամբք ալ վերականգնելով նախնական ձեւը՝ կը ստանանք «յաճորդութիւնքն թագաւորացն ի Տրդատայ եւ քահանայապետիցն ի Ս. Գրիգորէ, որ կացին մինչեւ առ մեզ» հետեւեալ պատկերի մէջ.

ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒԱԾ ԲՆԱԳԻՐԸ

Յետ Տրդատայ թագաւորեաց նորին որդի Խոսրով, որ կոչեցան Փոքր. Յետ նորա Տիրան՝ որդին Խոսրովու.

Յաւուրս Տիրանայ. Յետ մահուան Յուսիկան կալաւ զքահանայապետութիւնն Հայոց Փառնեբսէս ոմն մի յԱղարակէն Մատրանն Յովհաննու ի Տարան դաւառէ ի Մեհենազեղէն, որ Մայր է Եկեղեցիացն Հայոց, այսինքն նախ անդ եկեղեցի գառաջինն շինեալ:

Յետ նորա թագաւորէ Արշակ որդին Տիրանայ: Ի սորա աւուրս Ներսէս որդի Աթանազիէի եկաց յաթոռն Յուսիկանն, թոռ(ի)ն Գրիգորի մեծի<sup>15</sup>, զորմէ ասեմ համեմատեալ Գրիգորի ի գործս կարգաց վարուց գնացից իւրոց:

<sup>15</sup> Հմմտ. Փաւստոս Գ. 3. Արշակի գահ կը բարձրացնէ զՆերսէս «զորդի Աթանազիէի, զթոռն քահանայապետին Յուսիկան, որդւոյ Վրթանայ, որդւոյն Գրիգորի մեծին առաջնոց քահանայապետին»:

Յետ նորա Պապ որդին Արշակայ: Ձկնի սորա Սահակ [սա] եկաց կաթողիկոս:

Յետ նորա Վարազդատ ի նմին թագաւորութեանն տոհմէ: Եւ ապա Շահակ եւ Չարէն

Եւ ապա օտարակալութիւն: Եւ Ասպուրակ կացին կաթողիկոսք, որք էին ի զաւակէ Աղբաւանտի եպիսկոպոսի:

Ապա Խոսրով ոմն ի նմին տոհմէ թագաւորացն Հայոց: Առ որով Ասպուրակէս կաթողիկոս:

Առ սովաւ բաժանեցան զերկիրն Հայոց ընդ երկու՝ թագաւորն Յունաց եւ թագաւորն Պարսից: Պարսից կողմանն Խոսրով թագաւորէ:

Մասինն Յունաց աշխարհին Ա(ր)շակ ոմն ի ընտրեցաւ (որդի Ներսէսին տոհմէ թագաւորէ հրամանաւ Յունաց թագաւորին: — Յետ սորա կոմէսք կալան:

Յետ < Խոսրովու > Վառձապուհ՝ որ կողմանն Պարսից թագաւորաց:

Ապա ամս հարուստս մարգպանք Պարսից կալան մինչեւ առ մեզ:

Իսկ ապա Արտաշէզ որդի Վառձապսոյ թագաւորէ հրամանաւ Պարսից արքային:

Եւ ապա մարգպանք պարսիկք կալան մինչեւ առ մեզ:

Ընդդէմ այսպիսի դասաւորութեամբ «կարգօք թուովք եւ համարօք կանոնեալ զրոշմեալ նկարուած» էր Սերիոսի Պատմութեան սկիզբը գրուած Արքայացանկը երկից թագաւորութեանց՝ Հայոց, Պարսից եւ Հռովմայեցւոց, որոնք ապա վերածուած են նոյնպէս միահետ զրչութեան, ընականաբար դարձեալ անճիշդ համադրութեամբ թագաւորաց: Թերեւս նաեւ այդ Արքայացանկը Եղնկայ եղած ըլլայ, նոյն «Նկարագիր կարգաց» խորագրին տակ: Այս մասին պիտի խօսիմ այլուր առանձին:

7. Նկարագիր կարգաց սերտ կապ ունի Փ. Բուզանդի Պատմութեան հետ: Կը սկսի ճիշդ այն կէտէն, ուր Փ. Բուզանդ սկիզբ կ'ընէ իւր Պատմութեան, այն է Խոսրով Բ.էն եւ Վրթանէսէն: Առանց տարակուսի Եղնիկ աչքի առաջ ունեցած է Փ. Բուզանդի Պատմութիւնը: Կը շարունակէ Բուզանդէն մէկ

Յետ նորա Պապ որդին Արշակայ: Ձկնի սորա Սահակ [սա] եկաց կաթողիկոս: Եւ ապա Շահակ եւ Չարէն Եւ Ասպուրակ կացին կաթողիկոսք, որք էին ի զաւակէ Աղբաւանտի եպիսկոպոսի: Առ որով Ասպուրակէս կաթողիկոս:

կէտի մէջ. Փաւստոսի Փառնեբսէս 16: Իսկ Զաւրէնը ներկայացուած է հոս Զաւրէն զրչութեամբ, զոր նաեւ ժամանակք հայրապետաց պահած է: Եղնիկին հետեւած է Մ. Խորենացի: Ինչ ինչ անուններու չգոյութիւնը Նկարագրիս մէջ, նոյնպէս ինչ ինչ անուններու ետեւառոջութիւնը պէտք է վերագրել զրչին (խմբագրին) անհոգութեան:

Համեմատութեան կը դնեմ երկու հատուած.

ԵԶՆԻԿ

1. Յետ մահուան Յուսիկանն կալաւ զքահանայապետութիւնն Հայոց Փառնեբսէս ոմն մի յԱղարակէն Մատրանն Յովհաննու ի Տարան դաւառէ ի Մեհենազեղէն, որ մայր է Եկեղեցիացն Հայոց, այսինքն նախ անդ եկեղեցի զառաջին շինեալ:

ՓԱՒՍՏՈՍ

Գ. 16. Յայնմ ժամանակի համարեցան արժանի (աթոռոյ) զՓառնէն ոմն երէց ի դաւառէն Տարանոյ, ի մեծէ Մարգարէանոցէն Յովհաննու, որ էր նախ շինեալ տուն աղօթարանու, որ էր նախ շինեալ տուն աղօթարանու... Եւ յետ այնորիկ հանգեալ... Եւ թից... Եւ յամբիմն՝ զնացեալք առեալ պաշտօնէիցն... զմարմինն՝ զնացեալք ի դաւառն Տարանոյ տարան ի յԱղարակն մեծի Մարգարէանոցին Յովհաննու, ուր էր ինքն

Նկարագիր.	Փաւստոս.	Ժամանակի Հայրապետաց.	Մ. Խորենացի.
Վրթանէս	Վրթանէս	Գրիգոր ամս 1.	Գրիգոր ամս 1.
Յունիկ Փառնեբսէս	Յունիկ Փառնէն	Ռոստակէս ամս 1.	Ռոստակէս ամս 1.
Ներսէս	Շահակ	Վրթանէս ամս 1.	Վրթանէս 1.
Մահակ	Ներսէս	Գրիգորիս ամս 1.	Գրիգորիս ամս 1.
Շահակ	Չարէն	Յունիկ ամս 9.	Յունիկ 2.
Չարէն	Չարէն	Ներսէս ամս 9.	Փառնեբսէս Գ.
Ասպուրակէս	Չարէն	Փառնեբսէս ամս Գ.	Ներսէս 1Գ.
Մահակ	Շահակ	Շահակ 2.	Սահակ-Շահակ Գ.
	Ասպուրակէս	Չարէն Գ.	Չարէն Գ.
	Մահակ	Ասպուրակէս ամս 1.	Ասպուրակէս Ե.
	Պարսիցի	Մահակ ԾԱ.	Մահակ ԾԱ.
	Յովսէփ Երէց	Մահակ ԽԱ.	Մուրմակ Ա.
	Մովսէս	Պարսիցի	Բրբէշոյ Գ.
	Գիւտ	Գաղ ամս 1.	Շամուէլ Ե.

<sup>16</sup> Թերեւս Փառնեբսէս ըլլայ սխալ ընթերցումն Փաւստոսի «զՓառնէն ոմն երէց»ի, իբրեւ 12345 6789 ՓԱՌՆԵՆ ԵՐԷՑ 123 5.67.89 ՓԱՌ Ն ԵՐՍԵՂ

ի կենդանութեանն իւրում յառաջագոյն բնակեալ...: Հմմտ. եւ Գ. 14:

ԵԶՆԻԿ

2. Ապա Խոսրով ոմն ի նմին տոհմէ թագաւորացն Հայոց: Առ սովաւ բաժանեցան զերկիրն Հայոց ընդ երկու՝ թագաւորն Յունաց եւ թագաւորն Պարսից: Պարսից կողմանն Խոսրով թագաւորէ: Մասինն Յունաց աշխարհին Ա(ր)շակ ոմն ի նմին տոհմէ թագաւորէ հրամանաւ Յունաց թագաւորին:

ՓԱՒՍՏՈՍ

Ապա դասնէր ի նմին տոհմէ մանուկ մի անուն Խոսրով. եւ կապեաց թագ ի գլուխ նորա...:

Թագաւորն Յունաց եւ թագաւորն Պարսից... ընդ երկու(ս) զաշխարհն բաժանեցին: Բաժին կողմանն Պարսից էր թագաւորին Խոսրովու. եւ բաժին մասինն Յունաց էր թագաւորին Արշակայ:

8. Նկարագիր կարգաց այժմեան կերպարանքը առած էր արդէն Ը. դարուն: «Ժամանակք Հայրապետացն Հայոց», որ գրուած է 790ին, եւ Մովսէս Խորենացի իբր 820ին օգտուած են անկէ: Համեմատութեան կը դնեմ Նկարագիրն կարգաց, Փաւստոս, Ժամանակք հայրապետաց եւ Մ. Խորենացի.

Նկարագիր.	Փաւստոս.	Ժամանակի Հայրապետաց.	Մ. Խորենացի.
Վրթանէս	Վրթանէս	Գրիգոր ամս 1.	Գրիգոր ամս 1.
Յունիկ Փառնեբսէս	Յունիկ Փառնէն	Ռոստակէս ամս 1.	Ռոստակէս ամս 1.
Ներսէս	Շահակ	Վրթանէս ամս 1.	Վրթանէս 1.
Մահակ	Ներսէս	Գրիգորիս ամս 1.	Գրիգորիս ամս 1.
Շահակ	Չարէն	Յունիկ ամս 9.	Յունիկ 2.
Չարէն	Չարէն	Ներսէս ամս 9.	Փառնեբսէս Գ.
Ասպուրակէս	Չարէն	Փառնեբսէս ամս Գ.	Ներսէս 1Գ.
Մահակ	Շահակ	Շահակ 2.	Սահակ-Շահակ Գ.
	Ասպուրակէս	Չարէն Գ.	Չարէն Գ.
	Մահակ	Ասպուրակէս ամս 1.	Ասպուրակէս Ե.
	Պարսիցի	Մահակ ԾԱ.	Մահակ ԾԱ.
	Յովսէփ Երէց	Մահակ ԽԱ.	Մուրմակ Ա.
	Մովսէս	Պարսիցի	Բրբէշոյ Գ.
	Գիւտ	Գաղ ամս 1.	Շամուէլ Ե.

Փաւստոս երբք անդամ կը կրկնէ Փառնէն, ուստի ոչ սխալագրութեամբ: Խորենացի Փառնեբսէսը առած է Նկարագրէն, ուստի երբ հոն արդէն սխալագրութեամբ մուտ դատած էր այն:

